ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 322 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1550-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետների աշխատակազմերի կանոնադրությունները հաստատելու մասին» N 1550-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) նախաբանում «9-րդ հոդվածի 3.1-ին մասի» բառերը փոխարինել «9-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 2-րդ կետի» բառերով:

2. Որոշմամբ հաստատված NN 1-10 հավելվածներում (այսուհետ՝ հավելվածներ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) հավելվածների 14-րդ կետերը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ և 6-րդ ենթակետերով՝

«5) իրականացնում է մարզպետի աշխատակազմի գործունեության վերահսկողությունը.

6) լսում է մարզպետի աշխատակազմի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է գործունեության ստուգման արդյունքները։»։

3. Ուժը կորցրած ճանաչել հավելվածների 15-րդ կետերի 4-րդ և 5-րդ ենթակետերը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

22.03.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ